



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3571

# ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

## ՀԱՅ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԵԱՆ

### ՓԱՐԻԶԻ

( ՈՐԵՐՈԽ Հ ԿԱՐՄԻՐ ԽԵԶԻ ԵՒ ՌԻՍԱՆՈՂԱՑ  
ՕԴՆ ՄԱՍՆԱՑԻՊԵՐՈՒ )

Հիմնուած 1913 ին Փարիզ եւ Ֆրանս. կառավարութեան  
կողմէ 1917 ին Ֆանչցուած իբր Օւենք de Guerre,  
20588 Թուախամար պաշտօնագրով :



3571  
362  
Σ - 24

5, Rue Jean-Goujon, 15

PARIS

1951

3627

5

362  
Z 24 47

1 MAR 2010

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ  
ՀԱՅ ՏԻԿՆԱՑ ՄԻՈՒԹԵԱՆ ՓԱՐԻԶԻ  
(ՈՐԲԵՐՈՒ Հ. ԿԱՐՄԻՐ ԽԵԶԻ ԵՒ ՈՒՍՏԱՌԱՑ  
ՕԳՆ. ՄԱՍՆԱՅԻՆԴԵՐՈՒ)  
ՀԻՄՆՈՒԱԾ 1913 ԻՆ ՓԱՐԻԶ  
ԵՒ ՖՐԱՆՍ. ԿՈ.Ո.Վ.Ա.ՐՈՒԹԵԱՆ ԿՈՎՄԵ 1917 ԻՆ ՀԱՆՉՑՈՒԱԾ  
ԻԲՐ (ŒUVRE de GUERRE 20588 ԹՈՒԱՀԱՄԱՐ ՊԱՇՏՈՆԱԳՐՈՒ)

ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՒՆ Է՝ ՀԱՅՈՅ ԵԿԵՂԵՅԻ  
15, Rue Jean Goujon, -- PARIS (8<sup>e</sup>)

## Ա. — ՆՊԱՏԱԿ ԵՒ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

Յօդուած 1. — Հայ Տիկնանց Միութիւնը հիմնուած է՝ 1913 Մայիս  
15 ին ի Փարիզ. Նպատակն է՝

ա. — Պաշտպանել եւ խնամել Հայ որբերը Ֆրանսայի մէջ՝  
չոգ տանելով անսնց ուսման եւ ազգային դաստիարակութեան.  
նպաստել Հայ գպրցներու եւ որբանոցներու ըլլան անոնք  
Հայաստանի մէջ թէ արտասահման, մասնաւոր ուժ՝ տալու  
համար ֆրանսերէն լեզուի տարածման. ֆրանսական վարժա-  
րաններու մէջ յոջողագոյն աշակերտներուն մրցանակներ  
ստիմանել: (Որը. Օգն. Մասնաճիւղ)

բ. — Նիւթապէս եւ բարոյապէս օժանդակել փարիզաբնակ  
Հայ կարօտ եւ օժտեալ ուսանողներու, որոնք ֆրանսական  
մշակոյթի տարածիչները պիտի ըլլան Արեւելքի մէջ: (Ուսա-  
նողաց Մասնաճիւղ)

գ. — Օգնել Հայաստանի Կարմիր Խաչին. դեղ ու դարման  
մատակարարել Փարիզի չքաւոր Հայ հիւանդներուն. խնամք



8924-56

— 4 —

տանիւ կարօս յուի կանանց եւ նորածիններուն. աւսող երաւաներուն մրցանակներ սահմանել. տկարակազմ տղաքները ամարանց դրկել: (Ա. Խաչի Մասնաֆիւլ)

Դ.— Պաշտօն, գործ եւ գըաղում հայթայթել Փարիզ ապաստանած թշուառ հայ գաղթականներուն: Փարիզի մէջ հայ որուչիներուն եւ արժանաւոր համեստ գիրք ունեցող աղջկանց օժիտ տալ:

Ե.— Բարեբարներէ ստացած յանձնաբարութեանը համաձայն, բարի նպատակներու համար անոնց տրամադրած գումարներէն ֆօնս մը կազմել եւ գործածել այդ ֆօնու նուերասուրին կամքին համեմատ:

Միութեան տեւողութիւնը անսահման է:

Միութեան կեդրոնատեղին՝ Հայոց Եկեղեցի, 15, Rue Jean Goujon, Փարիզ 8<sup>o</sup>:

Յօդ. 2.— Հայ Տիկնանց Միութիւնը իր սոյն նպատակներուն իրադրման համար կը կերարէ հետեւեալ միջոցները.

1. Կը նշանակէ յատուկ մասնախումբեր՝ իր գործունէութեան իւրաքանչիւր ճիւղին համար.

2. Կը սահմանէ տուժամեայ կամ տեւական դրամական նպատակներ.

3. Կը յատկացնէ գեղեր, բժշկական դրամաններ, կը հրատարակէ առաջապահական տետրակներ: (Ա. Խաչի Օգն. Մ. Ֆիւլ)

4. Կը կազմակերպէ գասափոսութիւններ (Ա. Խաչի Օգն. Մ. Ֆիւլ) եւ բարյացուցիչ հանդէսներ.

5. Կը պահէ մասնաւոր պաշտօնեայ մը՝ պաշտօն, գործ գործ կամ գըաղում հայթայթելու համար անգործ հայերուն:

#### ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ

Յօդ. 3.— Հայ Տիկնանց Միութեան կրնայ անդամակցիւ՝ տուանց կրօնական դաւանանքի խորութեամ՝ ամէն հայուչի եւ հայ, որ պէտք է ներկայացուած ըլլայ Միութեան անդամներէն երկու հոգիի կողմէ եւ ընտրուած՝ Վարչական Ժողովէն:

Միութիւնը կունենայ՝ 1. Հիմնադիր, 2. Բարեբար, 3. Նորիքասու, 4. Պատուակալ, 5. Բաժանորդ, 6. Խորիքական անդամներ, 7. Օգնական կամ Օժանդակ անդամներ:

— 5 —

Տարեկան նուազագոյն անդամակցարն է 25 ֆրանք: Ամէն նորագիր անդամ պարտաւոր է մէկ անդամուան համար միայն՝ վճարել մուտքի տուրք մը, որ 25 ֆրանքէն պակաս չէ:

Սյու օրիգրդներն ու տիկինները, որոնք աշխատած են հիմք գնելու այս Միութեան, կը կոչուին Հիմնադիր անդամներ եւ իրենց անունները արձանագրուած են Միութեանս աւաջին նիստերուն ատենագրութեանց մէջ:

Բարեբար անդամ կը նկատուին անոնք՝ որ 20,000 ֆրանքի միանուագ նուէր մը կ'ընեն Միութեան եւ կամ ամէն տարի առնուուղն 4000 ֆրանքի կոնոնաւոր նուիրատուութիւն մը կ'ընեն:

Նորիքասու անդամ կը հոչակուին անոնք՝ որ առնուուղն 5000 ֆրանքի միանուագ նուիրատուութիւն մը կ'ընեն ի նպաստ Միութեան:

Պատուակալ անդամ՝ կ'ըլլան այն հայ կամ օտար անձնաւութիւնները, որոնք նշանակալից ծաւայութիւն մը կը մատուցանեն:

Բաժանորդ անդամ են բուօր անոնք, որոնք իրենց տարեկան անդամակցարը կը վճարեն կանոնաւորապէս ամէս ամիս կամ տարուէ տարի, եւ կամ իբր Միութեան անդամակցար՝ մէկ անդամէն որոշ գումար մը վճարելով կը պահէն իրենց անդամակցութեան իրաւունքը մինչեւ ցմահ (Rachat de cotisations):

Խորիդական են այն անձնաւորութիւնները, զոր Միութեան Վարչական Ժողովը կը հետափէ, որուէսպի օժանդակներն Միութեան գործունէութեամ՝ իրենց խորհուրդներով, թելագրութիւններով եւ գործակցութեամբ:

Օգնական կամ օժանդակ անդամներ կ'ըլլան անոնք՝ որ իրենց բարյական պէս պէս գործակցութեամբ, կը շանան դիւրացնել Միութեան վանական ձեռնարկները եւ կ'աշխատին յաջուցնել զանոնք՝ իրենց աշխատութեամբ:

Բարեբար, նուիրատու եւ Պատուակալ անդամներու ախուզունները կը տրուին Վարչական Ժողովին կողմէ:

Յօդ. 4.— Միութեան անդամակցութեան հանդամանքը կը չնջուի՝

1. Հրաժարականամբ.

2. Անդամակցութեան չնջումավ, որ Վարչական Խորհուրդներն որոշումավ կը գործադրուի՝ անդամակցարը չվճարողներու մասին, ինչպէս եւ ծանր պարագաներու աւթիւ: Ենթական նախապէս կը հրաժարուի բացարարութիւններ տալու Վարչական Ժողովին՝ եթէ ինքը չնախընտրէ գիրել Վարչական Ժողովին:

## Բ.— ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

(ՎԱՐՉՈՒԿԱՆ ԵՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐ)

### ՎԱՐՉ. ԺՈՂՈՎ

Յօդ. 5.— Վարչական Ժողովը կը բաղկանայ իր Մասնաճիւղերուն գիւտաներէն, որոնց իւրաքանչիւրը կը բաղկանայ 1 ատենապետէ, 1 ատենագլամիրէ, 1 գանձապետէ եւ Վարչական Ժողովի յատուկ 9 անդամներէն, որոնք կ'ընտրուին Բնդհ. Ժողովէն՝ գալանի քուէով: Վարչական Ժողովին է որ կը վարէ Փարփփի Հայ Տիեզնոց Միութիւնը՝ ներկայ կանոնագրին արամագրութեանց համաձայն: Վարչական Ժողովոյ պաշտօնագրութեան պայմանաժամը 3 տարի է: Պաշտօնաթթու անդամները վերընտրելի են:

Վարչական Ժողովը, գաղանի քուէով՝ իր անդամուչիներուն մէջէն կ'ընտրէ իր Դիւանը՝ բաղկացած՝ մէկ ատենապետէ, մէկ ատենագլամիրէ, մէկ փոխ-ատենագլամիրէ եւ մէկ գանձապետէ, որոնց պաշտօնագրութեան պայմանաժամը նոյնպէս 3 տարի է: Սոյն պայմանաժամի ընթացքին, Դիւանէն պակասզ անդամներուն տեղ նորեր կ'ընտրուին՝ Վարչ. Ժողովոյ կողմէ, զորս յետոյ կը վաւերացնէ Բնդհ. Ժողովը՝ իր գումարելիք առաջին նիստին մէջ:

Վարչ. Ժողովը իր մէջէն եւ Միութեան միւս անդամներէն կը նշանակէ իւրաքանչիւր Մասնաճիւղի անդամները: Մասնաճիւղերը իրենք կ'ընտրեն իրենց դիւանները, որ կը բաղկանայ մէկ ատենապետէ, մէկ ատենագլամիրէ եւ մէկ գանձապետէ:

Վարչ. Ժողովոյ ատենապետը չի կրնար ո եւ է Մասնաճիւղի ատենապետն ըլլալ միանդամայն:

Իւրաքանչիւր Մասնաճիւղ կրնայ իր անդամներէն մէկ կամ աւելիքն պաշտօն տալ ներկայ գտնուելու Վարչական Ժողովին խորհրդակցութեանց, բայց ինչ որ ալ ըլլալ պաշտօն ստացող այդ անդամներուն թիւը, իւրաքանչիւր Մասնաճիւղ մէկ ձայն միայն կրնայ ունենալ:

Մասնաճիւղերը պէտք է միշտ հրաւիրուին Վարչական Ժողովին նիստերուն:

Յօդ. 6.— Վարչական Ժողովը իր նիստերը կը գումարէ՝ առնուագն ամիսը մէկ անդամ, ինչպէս նաև ամէն անդամ որ նիստի հրաւիրուի իր ատենապետին եւ անդամներուն <sup>1/4</sup> ին առաջարկութեան վրայ, եւ կամ՝ Մասնաճիւղերէն մէկին Դիւանին կազմէ եղած ինդրանիքին վրայ: Խորհրդական անդամները կը հրաւիրուին, երբ իրենց ներկայութիւնը անհրաժեշտ նկատուի:

Վարչական Ժողովոյ խորհրդակցութիւնները օրինական ըլլալու համար, անդամներու թուոյն կէսէն մէկ աւելիքն ներկայութիւնը անհրաժեշտ է:

Նիստերու խորհրդակցութիւնոց արդիւնքը կ'արձանագրուի: Սոյն արձանագրութիւնները, մաքուրի գրուելէ առաջ, կը կարգացուին յաջորդ նիստին եւ կը վաւերացուին, յետոյ կը սորբագրուին Ատենապետին եւ Ատենագլամիրին կողմէ եւ կ'արտագրուին Ատենագրութեանց յատուկ պաշտօնական Տումարին մէջ չ:

Վարչական Ժողովոյ պարտականութիւնն է մզել որ Մասնաճիւղերը իրենց բոլոր ջանքը նուիրեն Միութեան Բաժանորդ, ինչպէս նաև Բարեկար, նուիրատու եւ Պատուական անդամներուն թիւն աւելցնելու եւ գանձումներուն կանոնաւութիւնոց հսկելու:

Վարչական Ժողովը կը մատակարարէ Միութեան ինչչերը, կը կոքէ փոխաւութիւններ, կը կատարէ գրաւի գործողութիւն, կը գնէ կամ կը փոխանցէ շարժուն եւ անշարժ առացուածքներ, կը կատարէ պանքայի եւ նման հաստատութեանց, ինչպէս նաև գատարանական ամէն տեսակ գործողութիւններ:

Վարչական Ժողովոյ Ատենապետին, Ատենագլամիրին եւ Գանձապետին միաժամանակ սորբագրութիւնները անհրաժեշտ են գերոյիշեալ գործունութեանց միջոցներ:

Տարին մէկ անդամ Բնդհ. Ժողովին կը տեղեկագրէ իր Մասնաճիւղերուն գործառնութիւններն ու հաշիւնները, Միութեան Բաժանորդ անդամներուն թիւը եւ ուրիշ յարակից կույւոր մանրամանութիւններ:

Սոյն պարագային՝ երբ Մասնաճիւղերէն մէկը անհրաժեշտ նկատէ արտասովոր հանդանակութիւն մը բանալ եւ կամ հանգէս մը կազմակերպել, Վարչական Ժողովը կը խորհրդակցի անոր հետ եւ կուտայ իր սրոշումը:

Վարչական Ժողովը կ'ընտրէ երկու անդամէ կազմուած Քննիչ Յանձնախումբ մը, որուն պաշտօնն է քննել Մասնա ժիւղերուն հաշիւները՝ Բնդշ. Ժողովոյ գումարումէն առաջ եւ նոյն այդ Յանձնախումբին տեղեկագիրը կը ներկայացնէ Բնդշ. Ժողովին:

Վարչական Ժողովը ամէն տարի Միութեան բոլոր անդամ ներսուն եւ մամուլին կը հազրուէ վաւերացեալ տարեկան տեղեկագիրն ու ընդհանուր հաշիւները: Իսկ տարին 2 անդամ ալ՝ Յուլիս եւ Յունուար ամիսներուն մէջ ստիպուած է իր հաշիւները ներկայացնել Պետութեան՝ քննութեան համար, սատ որում՝ ասուցած է Պետութենէն:

Յօդ. 7.— Վարչական Ժողովոյ, ինչպէս եւ Միութեան Մասնաձիւ ներսուն անդամները կ'եւ է դրամական փոխարինութիւն չեն ստանար իրենց վասահուած պաշտօններուն համար:

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Յօդ. 8.— Բնդշ. Ժողովը կը կազմեն՝ Միութեան Բաժանորդ անդամունքները. Վարչական Ժողովոյ հրաւերով Խորհրդական անդամներն աւ կը հրաւերուին Բնդշ. Ժողովին՝ տաւանց սահյան ունենալու քուէի իրաւունք:

Բնդշ. Ժողովոյ պաշտօնն է՝

ա.— Բնդրել Վարչական Ժողովոյ անդամները՝ գաղտանի քուէրկութեամբ եւ կամ լուծել այդ Ժողովը ի հարկին:

բ.— Քննել Վարչական Ժողովոյ վարչական եւ դրամական գործառնութիւններու տեղեկագիրը՝ ամէն տարեշրջանի լրաւնալուն եւ վաւերացնել լայն:

գ.— Վերաքննել Միութեան կանոնագիրը՝ եթէ Բնդշ. Ժողովոյ մեծամասնութիւնը պահանջէ այդ վերաքննութիւնը:

Բնդշ. Ժողովը իր նիստերը կը գումարէ առնուազն տարին անդամ մը: Սակէ զատ, բացառաբար նիստ կը գումարէ նաև՝ երբ Վարչական Ժողովոյ դիւնը կամ Բնդշ. Ժողովոյ անդամունքներուն  $\frac{1}{3}$  ը անհրաժեշտ կը նկատեն:

Բնդշ. Ժողովոյ նիստերը օրինական են՝ երբ իր Փարիզ բնակող անդամունքներուն  $\frac{1}{3}$  ը մասը ներկայ կամ ներկայաց ուած է:

Եթէ մեծամասնութիւն չգոյանայ առաջին նիստին, 15 օր վերջը տեղի կ'ունենայ երկրորդ նիստ մը, որ, ինչ որ աւ ըլւայ ներկայ եղողներուն թիւը օրինական կը համարուի:

Բնդշ. Ժողովը, ամէն անդամ նիստ գումարելուն, կ'ընտրէ դիւն մը ներկայ անդամունքներէն, գաղտնի քուէարկութեամբ: Դիւնը կը բաղկանոյ՝ մէկ Սահնապետէ եւ մէկ Ատենագլուիրէ:

Որոշումները կը տրուին բացարձակ մեծամասնութեամբ: Զայներու բաժանման պարագային Սահնապետին ձայնը կ'ունենայ երկու ձայնի ուժ:

Բացակայ անդամ մը կրնայ իր ձայնը տալ ուրիշ անդամի մը, գրաւոր փոխանորդագրով:

Յօդ. 9.— Միութեան Մասնաձիւ ներսուն բոլոր որոշումները, որոնք կը վերաբերին արժէքներու գնումներու, փոխանակութեան եւ վաճառման՝ Միութեան նպատակին՝ իրագործման համար, պէտք է ենթարկուին Վարչական Ժողովոյ վաւերացման եւ եւ արագարդ պարագաներու մէջ՝ Բնդշ. Ժողովոյ հաւանութեան:

Յօդ. 10.— Մասնաձիւ նույն որոշումները, որոնք կը վերաբերին նույներ կամ կտակներ ընդունելու, օրինական են՝ երբ անոնց մասին պետական վաւերացում ձեռք կը բերուի՝ ֆրանսական քաղաքային օրինագիրքի 910 րդ յօդուածին եւ 1901 Փետր. 4 ին օրէնքին 5 րդ եւ 7 րդ յօդուածներու տրամադրութեանց համաձայն:

Վարչական Ժողովին այն որոշումները, որոնք կը վերաբերին Միութեան հաստատուն եկամուտը կազմով շարժուն եւ անշարժ ինչքերու վաճառման, եւայլն, վաւերական են պետական պարզ հրամանագրով միայն (décret simple):

Սակայն, երբ ինչքերը շարժուն ինչքերու վաճառման վրայ է, եւ երբ վաճառելի ինչքերն արժէքը՝ Միութեան հաստատուն եկամուտին շարժուն գրամագրութիւն  $\frac{1}{20}$  ը չ'անցնիր, հրամանը կը տրուի Préfet ին կողմէ:

Յօդ. 11.— Միութեանը իր նպատակներուն իրագործման համար ունի հետեւեալ Մասնաձիւ:

1. Որբերու Օգնութեան Մասնաձիւ, որուն հսկողութեան տակ է գործ հայթայթով պաշտօնեան:

2. Ուսանողներու Օգնութեան Մասնաձիւ:

3. Հայաստանի Կարմիր Խեցի Օգնութեան Մասնաճիւլ,  
որ միանդամայն Փարիզի հիւանդաղակարաբարէ, կը ինստանտէ յլի կիւներն ու նորածինները, առողջ առայց մրցանակ կը սահմանէ՝ կարող քժիշխերէ կաղմուտծ խառն մասնաճիւլի մը կաղմէ քննել տալէ յետոյ:

*Մասնաճիւլերը իրենց կարգին կրնան ունենաւ զանազան Մասնախումբեր (comité) :*

Այս երեք Մասնաճիւլերը կը գործեն առանձինն, Վարչ Ժաղավոյ ղեկավարութեան տակ: Անոնք պարբերաբար կը տեղեկացնեն իրենց գործաւնութիւնները Վարչականի նիստին, որոնց կը հրաւիրուին Վարչական Ժողովին կաղմէ: Իրենք կ'ընտրեն գործակից անդամներ, որոնց ընտրութիւնը վերջնական ըլլալէ առաջ կը տեղեկացնեն Վարչականին: Մասնաճիւլերը իրենց տարեկան հաշիւնները կը ներկայացնեն Վարչական Ժողովին, որ իր կարգին զայն կը ներկայացնէ Բնդ հանուր Ժողովին:

Վարչական Ժողովի մասնաւոր սրոշումովը կրնան կազմըւ և լ. Փարիզի եւ արուարձաններու մէջ Օժանդակ Մասնաւոր համագումէ իւրաքանչիւրը պատասխանատու է իր անունը կրող Կեդրոնական Մասնաճիւլին. զոր օրինակ. Հայ Կարմիր Խեցի Օգն. Կեդր. Մասնաճիւլին պատասխանատու է այդ անունվ կաղմուտծ Փարիզի կամ արուարձանի Օժանդակ Մասնախումբը:

Ասկէ զատ պէտք է ունենան անդամտուիար մը, ուր տրամադրուած ըլլան անդամներու անսաններն ու անսնց վճարած տարեկարն ու ամսավճարը:

## Գ.— ՀԱՍՏԱՏՈՒՆ ԵԿԱՄՈՒՏ (DOTATION), ՊԱՇԵՍԻ ԴՐԱՄ, ՏԱՐԵԿԱՆ ՀԱՍՈՅԹ

Յօդ. 12. — *Միութեանս հաստատուն եկամուտը կը բարկանայ՝*  
*ա. — Պատրաստ նիւթական գրամագլուխէն (capitaux mobiliers):*

բ. — Անշարժ կալուածներէ. (Դամոթ. — Առայժմ չունի:)

գ. — Նուէրներէ գոյացած անձեռնմիւնի գրամագլուխներէ.

դ. — Տարեկան անդամավճարի փոփարէն միանուագ տրամադրուած գումարներէ (rachat des cotisations).

ե. — *Միութեանս ինչքերուն զուտ հասոյթին առնուազն 1/10 էն, որ տարուէ տարի կը բարգուի գրամագլուխին վրայ:*

Յօդ. 13. — *Հաստատուն եկամուտին մէջ գտնուած շարժուն գրամագլուխները կը յատկացուին գնելու ֆրանսական պետական արժեթուղթեր կամ այնպիսի անսաւանական պարտաթուղթեր, որոնց տակուը երաշխաւորուած է Պետականէնէն:*

Կրնայ յատկացուիլ նաև՝ պետական հրամանագրավ արաօնութիւն ձեռք բերելէ յետոյ՝ ուրիշ արժեթուղթերու եւ կամ Միութեանս նպատակին իրագործման յատուկ շէնքերու գնման:

Յօդ. 14. — *Պահեստի գրամը կը բարկանայ՝ տարեկան ընդհանուր հասոյթին 10 առ 100 ոլ: Այս սակը եւ պահեստի գրամագլուխին կաղմութեան եղանակը կրնան փոփառութիւն կրել Բնդ. Ժողովին սրաշումներով:*

Այս սրաշումները պէտք է ըստ օրինի տեղեկագրել. Préfet de la Seine, մինչեւ 8 օր:

Յօդ. 15. — *Միութեանս տարեկան հասոյթներն են՝*

ա. — *Իր ինչքերէն գոյացած եկամուտի այն մասը, որ հաստատուն եկամուտին մաս չի կաղմեր.*

բ. — *Անդամավճարներ եւ հանդանակութիւններ.*

գ. — *Պետական նպատաներ.*

դ. — *Զեռնչաս իշխանութեան կաղմէ արուած արտօնութեան վրայ՝ ի պահանջել հարկին՝ բացառիկ կերպով ստեղծուած հասոյթներ (հանդանակութիւն, թօմալա, վիճակահանութիւն,*

պարագանդէս, գասախօսութիւն եւ ներկայացում՝ ի նպաստ  
Մ'իութեան):

Եւ.— Նուիրասուութիւններ՝ որոնց անմիջական կերպով ծախ-  
սումը կամ գործածութիւնը արտօնուած է:

Յօդ. 16.— Մ'իութեանս Մ'ասնաճիւղերը պարտաւոր են հաշուե՛տո-  
մարներու մէջ օրը օրին արձանագրել իրենց ծախքերն ու հա-  
սոյթները, չարկ եղած մանրամասնութիւններով:

Մ'իութեանս իւրաքանչիւր Մ'ասնաճիւղը պէտք է առանձին  
եւ որոշ հաշուետերը մը ունենայ իր հաշիւներուն համար,  
որոնք կը կազմեն մէկ մասը՝ Մ'իութեան ընդհանուր միաց-  
եալ հաշիւներուն:

## Դ.— ԿԱՆՈՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ ԵՒ ԼՈՒԾՈՒՄ ՄԻՈՒԹԵԱՆ

Յօդ. 17.— Կանոնագրութիւնը կրնայ փոփոխութիւն կրել Վարչական  
Ժողովին <sup>2/3</sup> ին կամ Բնդ. Ժողովոյ անդամներուն <sup>1/10</sup> ին  
առաջարկութեան վրայ, զոր Դիւանին պէտք է ներկայացնեն  
նիստի օրէն առնուազն մէկ ամիս առաջ: Կատարուած փոփո-  
խութիւնը կը վաւերացուի Բնդ.հանուր Ժողովի կողմէն:

Բնդ.հանուր Ժողովը պէտք է բաղկացած ըլլայ՝ առնուազն  
եր անդամներու թուոյն <sup>1/4</sup> էն: Եթէ այս համեմատութիւնը  
չունենայ, ուրիշ անդամ նորէն կը հրաւիրուի, բայց առնը-  
ւազն 15 օր վերջը, ուրի, ինչ որ ալ ըլլայ ներկայ անդամնե-  
րուն թիւը, կրնան օրինական նկատուիլ իր տուած որոշումները  
<sup>2/3</sup> ի մեծամասնութեամբ.

Յօդ. 18.— Բնդ. ԺՈՂՈՎԸ երբ նիստի հրաւիրուած է իր որոշումը  
տալու լուծման մասին եւ կամ երբ յատկապէս այս իսկ նպա-  
տակով նիստի հրաւիրուած է, պէտք է ունենայ առնուազն իր  
կէուն մէկ աւելի մեծամասնութիւն:

Եթէ այս համեմատութիւնը չունենայ անդամներու թիւը,  
Ժողովը կրկին կը հրաւիրուի, առնուազն 15 օր վերջը եւ այս  
անդամ, ի՞նչ որ ալ ըլլայ իր ներկայ անդամներուն թիւը,  
տուած որոշումները օրինական կը նկատուին:

Արէն պարագայի մէջ, Մ'իութեան լուծումը կը քուէար-  
կուի՝ ներկայ անդամներուն <sup>2/3</sup> ին մեծամասնութեամբ միայն:

Յօդ. 19.— Լուծումի պարագային, Բնդ. Ժողովը կը կարգէ մաս-  
նաւոր անձեր, սրոնք կը կատարին Մ'իութեան ինչքերուն հաշ-  
ուեյարգարութիւնը:

Իր գոյքը կը բաժնուի ալգային բարենպատակ հիմնար-  
կութեանց միջեւ, կանխորշ համեմատութեամբ:

Յօդ. 20.— Բնդ. Ժողովոյ որոշումները, սրոնք նախատեսուած են  
17 րդ, 18 րդ եւ 19 րդ յօդուածներուն մէջ, առանց պայմա-  
նագործի կը հալորդուին ներքին Գործոց Նախարարին, սրմէ  
ձանչցուած է իրը Օսւոր դե Գուրր: Այդ որոշումները օրի-  
նական են՝ յետ վաւերացման կառավարութեան:



## Ե. — ՀԱԿՈՂՈՒԹԻՒՆ ԵՒ ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ

Յօդ. 21. — Միութեանս ներկայացուցիչը Պետութեան մօտ՝ պարտաւոր է՝ երեք ամսուան միջոցին՝ հաղորդել *Préfet de la Seine* ին՝ բուլոր այն փոփոխութիւնները, որոնք տեղի ունեցած են Միութեան վարչութեան մէջ:

Միութեան առմարները եւ հաշուեասմարները կը ներկայացուին՝ Ներքին Գործոց նախարարին կոմ *Préfet* ին, կամ անոնց պատուիրակին եւ կամ անոնց կողմէ դրկուած պաշտօնատրին քննութեան:

Յօդ. 22. — Ներքին Գործոց նախարարը իրաւունք ունի իր պատուիրակներուն միջոցաւ այցելել *Միութեան հաստատութիւն*-ները եւ տեղեկանալ անոնց զործունէութեանց:

Յօդ. 23. — Ներքին Կանոնագիրը, որ կը պատրաստաի Վարչական Ժողովին կողմէ եւ կ'ընդունուի *Բնդհանուր Ժողովէն*, պէտք է ենթարկուի Ներքին Գործոց նախարարին վաւերացման:



23

43.296